ԳՈՐԻՍԻ ՇՐՋԱՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Գ. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայրենական պատերազմի տարիներին Գորիսի շրջանի աշխատավորները ևս իրենց լուման ներդրեցին ֆաշիզմի դեմ սովետական ժողովրդի մղած պայքարում։ Պատերազմի տարիներին շրջանային կուսակցական և պետական ղեկավար օրգանների ղեկավարությամբ շրջանի տնտեսությունը վերակառուցվեց ռազմաճակատի շահերին համապատասխան։

Հայրենական պատերազմի տարիներին ֆաշիզմի դեմ մղված մարտերին մասնակցեցին 4330 գորիսեցիներ։ Նրանցից 2500-ը պարգևատրվեցին ՍՍՀՄ շքանշաններով ու մեդալներով, զոհվեցին՝ 2559-ը[1]։ Գորիսի շրջանի աշխատավորները սովետական բանակին տվել են անվանի զորահրամանատարներ և քաղաշխատողներ։ Նրանցից են դիվիզիայի կոմիսար Գևորգ Սաֆրազբեկյանը, դիվիզիայի զինկոմ Իվան Վարդանյանը, գվարդիայի գեներալ-լեյտենանտ Բագրատ Առուշանյանը, գվարդիայի գեներալ-մայոր Սերգեյ Կարապետյանը, գեներալ-մայոր Մուշեղ Մինասյանը, գեներալ-մայոր Համո Յոլյանը, դիվիզիայի հրամանատար, գնդապետ Ներսես Բալոյանը, տանկային բրիգադայի հրամանատար, Սովետական Միության հերոս, գվարդիայի գնդապետ Գրիգոր Գալստյանը։

Շրջանի աշխատավորության ծոցից են դուրս եկել Սովետական Միության հերոսներ, գվարդիայի գնդապետ Գրիգոր Գալստյանը, գվարդիայի լեյտենանտ Գուրգեն Արզումանյանը, ավագ սերժանտ Սուրեն Առաքելյանը, գվարդիայի եֆրեյտոր Արամայիս Սարգսյանը, ռազմական 92-րդ գործարանի դիրեկտոր, սոցիալիստական աշխատանքի հերոս Համո Յոլյանը։

Գորիսի շրջանի աշխատավորները բացառիկ կարևոր նշանակություն էին տալիս պարտավորությունների ժամկետից շուտ կատարմանը։ Հայրենական պատերազմի օրերին Գորիսի շրջանում ևս ավելի ու ավելի էր ծավալվում սոցիալիստական մրցությունը։ Թիկունքի աշխատողները չէին բավարարվում արտադրական նորմաների սովորական գերակատարումով, նրանք ձգտում էին աշխատել երկուսի, երեքի փոխարեն։ Այդ մրցությունն առաջ բերեց երկուհարյուրականների, երեքհարյուրականների ու հազարականների շարժումը։ Գորիսի շրջանում երկուհարյուրականներ դարձան ոչ միայն անհատ մարդիկ, այլև ամբողջ օղակներ, բրիգադներ ու տնտեսություններ։ Պատերազմի բոլոր տարիներին հացահատիկային կուլտուրաների բերքահավաքը շրջանում կատարվել է 9—15 օրում։ Խոտը և հացահատիկային կուլտուրաները հնձում, հավաքում էին ձեռքով, դաշտային աշխատանքների շնչին մասն էր ենթարկված մեքենայացման։ Հացահատիկային կուլտուրաների բերքահավաքը սեղմ ժամ-

---

[1] *Տվյալները վերցված են Գորիսի շրջանի քաղաքային և գյուղական սովետների գործկոմների և շրջգինկոմխարհատի արխիվներից։*

կևտում էին կատարում Կորնիձոր, Կյորու (այժմ Զորաշեն), Տեղ, Խնձորեսկ, Ղուրթղալտխ, Խնածախ, Շինուհայր, Հալիձոր, Ցայջու (այժմ Հարժիս), Խոտ և Քարաշեն գյուղերի կոլտնտեսությունները։ Կուսակցական, սովետական և հասարակական կազմակերպությունների աշխատանքները վերակառուցվեցին պատերազմի պահանջներին համապատասխան։ Շրջսովետի գործկոմի կոլեկտիվի նախաձեռնությամբ կրճատվեց 45 հաստիք, ամսական տնտեսվեց 11.340 ռ. աշխատավարձ և այն փոխանցվեց երկրի պաշտպանության ֆոնդ[2]։ Շրջսովետի գործկոմի բաժինները և գյուղական սովետների գործկոմները հրսկայական աշխատանք կատարեցին աշխատավորության ուժերի և միջոցների մոբիլիզացման ուղղությամբ։

1941 թ. հուլիսի 15-ից շրջանի բոլոր գյուղերում և Գորիսի հիմնարկ-ձեռնարկություններում սկսվեցին քիմիական պաշտպանության խմբակների պարապմունքները[3]։ Գործում էին նաև հակաօդային պաշտպանության 241 խմբակներ, որոնցում ընդգրկված էին 16—60 տարեկան քաղաքացիներ[4]։ Շրջանի աշխատավորները ուսումնասիրում էին ռազմական գործը։ Աշխարհազորային ջոկատների և խմբերի օգնությամբ ու աշխատավորության լայն մասնակցությամբ ամրություններ կառուցվեցին Գորիսի օդանավակայանի շրջակայքում և Որոտանի ձորում։ Զափաղանց մեծ նշանակություն էր տրվում նաև քաղաքական մասսայական աշխատանքին. շրջանի 47 ագիտկոլեկտիվներում ընդգրկված էին ավելի քան 230 ագիտատորներ[5]։

Կոլտնտեսություններում աշխատանքային կարգապահությունն ամրապնդելու համար ՍՍՀՄ Ժողկոմսովետը և Համկ(բ)կ Կենտկոմը 1942 թ. ապրիլին որոշում ընդունեցին կոլտնտեսականների աշխօրերի պարտադիր մինիմումը բարձրացնելու մասին։ Միաժամանակ ՍՍՀՄ Ժողկոմսովետը և Համկ(բ)կ Կենտկոմը որոշումներ ընդունեցին գյուղատնտեսության առաջավորների նյութական խրախուսանքի, ինչպես նաև քաղաքների ու գյուղական վայրերի աշխատունակ բնակչությանը մոբիլիզացնելու կարգի մասին։ Այդ որոշումները նյութական ու բարոյական խրախուսանքի պայմաններ ստեղծեցին գյուղատնտեսական աշխատանքները ժամանակին կատարելու համար։ Կարևոր նշանակություն ուներ ղեկավար կադրերի, լավ կազմակերպիչների ընտրությունը, քանի որ պատերազմի միայն առաջին 10 ամսում շրջանից ռազմաճակատ էին մեկնել գյուղատնտեսության բնագավառի 161 ղեկավար աշխատողներ[6], որոնց փոխարինել էին հիմնականում կանայք։ Այսպես, օրինակ, շրջանում գյուղական սովետների նախագահներից 4-ը, դաշտավարական բրիգադավարներից 41-ը, ֆերմաների վարիչներից 2-ը կանայք էին[7]։ Անվանի բրիգադավարների համբավ էին վայելում Սիրան Բալյանը և Արուսյակ Դավթյանը (Կորնիձորից), Արուսյակ Մկրտչյանը (Տաթևից), Լուսիկ Ավանեսյանը (Հալիձորից), Արուսյակ Քոչարյանը (Զորաշենից) և շատ ուրիշներ։

---

2 Գորիսի շրջսովետի գործկոմի արխիվ, գ. 433, թ. 48—50։

3 ՍՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի արխիվ (այսուհետև՝ ՄԼԻ արխիվ), ֆ. 15, գ. 81, թ. 68։

4 «Ստալինյան դրոշով», 1941, № 63։

5 ՄԼԻ արխիվ, ֆ. 15, գ. 2, թ. 20։

6 Նույն տեղում, գ. 101, թ. 1։

7 Նույն տեղում, գ. 200, թ. 52։

Պատերազմի ժամանակ, հատկապես ձմեռային ամիսներին, լուրջ ուշադրություն էր նվիրվում գյուղատնտեսական մասնագետների պատրաստմանը։ Հարյուրավոր մարդիկ սովորում էին տրակտորիստի, կոմբայնավարի, կալսիչավարի և այլ մասնագիտություններ։ Բացի այդ, հանրապետության տարբեր շրջաններում կազմակերպված կադրերի վերապատրաստման դասընթացներում սովորեցին 491 մարդ (230-ը կանայք)։

Պատերազմի տարիներին շրջանի տնտեսությունները լուրջ ուշադրություն էին դարձնում հացահատիկային կուլտուրաների ցանքատարածությունների ընդարձակմանը և մշակմանը, ձգտելով բարձրացնել բերքատվությունը։ Միայն 1943 թ. հացահատիկային կուլտուրաների ցանքատարածությունները ընդարձակվեցին 2000, իսկ մյուս կուլտուրաներինը՝ 500 հեկտարով։ 1943 թ. հացահատիկային կուլտուրաների ամեն մի հեկտարից կոլտնտեսություններն ստացան 11 ց. միջին բերք, որն ամենաբարձրն էր շրջանի գոյության ընթացքում։ Ավելի բարձր բերք ստացան Կորնիձորի, Քարաշենի, Տեղի, Մաղանջուղի (այժմ Այգեձոր) կոլտնտեսությունները, որոնք մեկ հեկտարից հավաքեցին 12—14 ց. միջին բերք։ Ձեռք բերված հաջողությունների շնորհիվ շրջանի կոլտնտեսականները 1943 թ. պետությանը ազատ գնման կարգով վաճառեցին 72.000 փութ հացահատիկ։

Պատերազմի տարիներին շրջանի կոլտնտեսությունները 201 հեկտարով ընդարձակեցին նաև պտղատու և խաղողի այգիները, դրանց տարածությունը հասցնելով 837-ի։ Շրջանում առանձին ուշադրություն էր դարձվում ծխախոտի մշակմանը և շերամապահության զարգացմանը։ Շրջկենտրոնի և Տեղ գյուղի կոլտնտեսությունները պատերազմի տարիներին 140—180%-ով գերակատարեցին պետությանը ծխախոտի հումք վաճառելու առաջադրանքները։ Լուրջ արդյունքների էին հասել շերամապահները[8]։ Տեղ գյուղի կոլտնտեսության կոլտնտեսուհի Վարդուշ Բաբայանը, օրինակ, մեկ տուփ գրենայից նախատեսված 44 կգ-ի դիմաց ստացավ 132, Վարդանուշ Էյլազյանը՝ 116, Հազարավարդ Փարսադանյանը (շրջկենտրոնի կոլտնտեսությունից)՝ 114, քարհունջեցիներ Անիկա Սարգսյանը և Փառանձեմ Գալստյանը համապատասխանաբար՝ 116 և 109 կգ բոժոժ և այլն[9]։

Պատերազմի տարիներին շրջանի հանրային տնտեսություններում աճեց նաև անասունների գլխաքանակը, բարձրացավ նրանց մթերատվությունը։

Գորիսի շրջանի աշխատավորները անմասն չմնացին երկրի պաշտպանության ֆոնդին նյութական օգնություն ցույց տալու գործում։ Նրանք պատերազմի առաջին օրերին պաշտպանության ֆոնդին նվիրեցին 71.765 ռ. կանխիկ դրամ, 158.000 ռ. փոխառություն, 2.700 աշխօրի հասանելիք բնամթերք և դրամ, 158 գլուխ խոշոր և 851 գլուխ մանր եղջերավոր անասուն, 1.300 կգ պանիր, 300 կգ յուղ, 550 կգ բուրդ, մոտ 50 ց. հացահատիկ, 60 ց. խոտ[10]։ 1941 թ. սեպտեմբերի առաջին տասնօրյակում շրջանի կոլտնտեսությունները երկրի պաշտպանության ֆոնդին նվիրեցին 143 գլուխ խոշոր և 624 մանր եղջերավոր անասուն, 720 կգ պանիր, 200 կգ յուղ, 500 կգ բուրդ, 25 ց. հացահատիկ[11]։

---

8 Նույն տեղում, թ. 23, 24։

9 Նույն տեղում, թ. 24։

10 «Սովետական Հայաստան», 21. VIII. 1941։

11 Նույն տեղում, 6. IX. 1941։

Պաշտպանության ֆոնդի ստեղծմանը ակտիվ մասնակցություն ունեցան նաև կոմերիտականներն ու պիոներները։ Նրանք միայն օգոստոս ամսին պաշտպանության ֆոնդին նվիրեցին 4.539 աշխար, 48.900 ռ. փոխառության պարտատոմս, 140.013 ռ. կանխիկ դրամ և 2.894 կգ գունավոր մետաղ։ Շրջանի երիտասարդությունը հաճախ էր կազմակերպում շաբաթօրյակներ և վաստակը նվիրում երկրի պաշտպանության և ազատագրված սովետական շրջանների վերականգնման ֆոնդերին։ Նրանք «Կոմերիտական տանկային շարասյան» ֆոնդին հատկացրին 112.000 ռ.[12]։ 1943 թ. հոկտեմբերի մի քանի օրում շրջանի կոմերիտականները «Երիտասարդ գվարդիա» էսկադրիլիա կառուցելու ֆոնդին նվիրեցին մոտ 135.000 ռ.[13]։

Գորիսի շրջանի պարտադիր ռազմական ուսուցման միավորների մարտիկները «Հայաստանի պարտուս» տանկային շարասյան ֆոնդին նվիրեցին 27.000 ռ.[14], Վերիշենի պարտադիր ռազմուսի միավորման մարտիկները՝ 12.000 ռ.։ Նրանց նախաձեռնությունը լայն արձագանք գտավ շրջանում։

Արձագանքելով տամբովցիների հայրենասիրական նախաձեռնությանը, շրջանի կոլտնտեսականները և կոլտնտեսուհիներն իրենց անձնական խնայողությունից հավաքեցին 500.000 ռ.՝ «Հայաստանի կոլտնտեսական» տանկային շարասյան կառուցման համար[15]։ Պետական հանձնումների պլանը կատարելուց հետո, 1942 թ. բերքից սովետական բանակի ֆոնդ մուծվեց 12.000 փութ հացահատիկ[16]։ Այդ գործին ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին Քարահունջի «Ֆեդերացիա» կոլտնտեսության անդամները՝ նվիրելով 50.000 ռ.։ Բացի այդ, Գորիսի շրջանի աշխատավորները «Սովետական Հայաստան» ավիամիավորման ֆոնդ մուծեցին 25.500 ռ.։

Այդ նվիրատվությունների համար շրջանի աշխատավորությանն ուղղված Գերագույն գլխավոր հրամանատարության շնորհակալական հեռագրում ասված էր.

«Գորիս

Հայաստանի Կ(բ)Պ Գորիսի շրջկոմի քարտուղար ընկ. Սարգսյանին. Իմ եղբայրական ողջույնը և Կարմիր Բանակի շնորհակալությունը հաղորդեք Գորիսի շրջանի աշխատավորներին, որոնք 755 հազար ռուբլի հավաքել են տանկեր և ինքնաթիռներ կառուցելու համար, Կարմիր Բանակի ֆոնդին հանձնել են 12 հազար փութ ցորեն և ճակատայիններին ուղարկել նվերներ և տաք հագուստ.

Ի. Ստալին»[17]։

Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը հենց պատերազմի ընթացքում բացառիկ ուշադրություն էին դարձնում թշնամուց ազատագրված շրջաններում ժողովրդական տնտեսության վերականգնմանը։ Արձագանքելով Յարոսլավլի և Իվանովոյի մարզերի կոլտնտեսականների նախաձեռնությանը, շրջանում ծավալվեց լայն շարժում։ Այդ նպատակով 1943 թ. մարտին աշխատավորները հավաքեցին 100 ց. հացահատիկ,

12 Նույն տեղում, 23. IX. 1942։
13 Նույն տեղում, 22. X. 1943։
14 «Ստալինյան դրոշով», 14. III. 1943։
15 «Սովետական Հայաստան», 26. XII. 1943։
16 Նույն տեղում, 14. IV. 1943։
17 Նույն տեղում։

16 ց. կարտոֆիլ, 140.000 ռ. և տնային գործածության բազմաթիվ իրեր[18]։ 1944 թ. գարնանը շրջանի կոլտնտեսությունները Ուկրաինայի ազատագրված շրջաններ ուղարկեցին 250 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, այդ թվում՝ 65 կով, և 450 գլուխ ոչխար ու այծ[19]։

1941 թ. աշնանը ամբողջ երկրով մեկ ծավալվեց սովետական բանակի մարտիկների համար տաք հագուստ հավաքելու շարժում։ Ստեղծվեցին համապատասխան հանձնաժողովներ։ 1941 թ. ընթացքում Գորիսի աշխատավորները ռազմաճակատ ուղարկեցին 16.000 զույգ գուլպա, 6.200 զույգ ձեռնոց, 712 զույգ ներքին տաք հագուստ, 402 զույգ կաշվե ձեռնոց և այլն։ 1942 թ. հունվարի 1—10-ը շրջանի աշխատավորները սովետական բանակի մարտիկներին ուղարկեցին 3.160 զույգ բրդյա գուլպա, 614 զույգ բրդյա և 226 զույգ կաշվե ձեռնոցներ, 1215 հատ մորթի և 29 ց. բուրգ[20]։ Գորիս քաղաքի միջնակարգ դպրոցի պիոներները և կոմերիտականները սովետական բանակին նվիրեցին 171 զույգ բրդյա գուլպա, 187 զույգ ձեռնոց, մորթիներ, գլխարկներ և զանազան տաք հագուստ, ինչպես նաև 1310 ռ. կանխիկ դրամ՝ տաք հագուստ գնելու համար[21]։ Ընդհանուր առմամբ՝ պատերազմի առաջին 3 տարում Գորիսի շրջանը ռազմաճակատ ուղարկեց 163.000 կտոր զանազան տեսակի տաք հագուստ։ Պատերազմի տարիներին երկրի բոլոր բնակավայրերում ստեղծվեցին զինվորականների ընտանիքներին օգնություն կազմակերպող հանձնաժողովներ, իսկ շրջանային սովետների գործկոմներում այդ նպատակի համար կազմակերպվեցին բաժիններ։ Բոլոր կոլտնտեսությունները և հասարակական կազմակերպությունները ֆոնդեր էին առանձնացնում ճակատայինների ու վիրավոր զինվորների ընտանիքների ու երեխաների կարիքները հոգալու համար։

Հայրենական պատերազմի տարիներին Գորիսի շրջանում զինվորականների ընտանիքները պետությունից, կոլտնտեսություններից հասարակական կարգով ստացան 5782 ց. հացահատիկ, 176 ց. կարտոֆիլ, 7 ց. յուղ, 25 ց. աղ, 17 ց. ձավար, 6675 կտոր հագուստ, 27 ց. պանիր, 1100 տ. անասնակեր, 1643 խմ վառելափայտ, 100 գլուխ անասուն, 10.000 զույգ կոշիկ, 80.000 ռ. դրամական օգնություն և ավելի քան 11 մլն. ռ. նպաստ[22]։

Պատերազմի ծանր տարիներին էլ Գորիսի շրջանում շինարարությունը կանգ չառավ. ստեղծվեցին մի շարք կառույցներ։ 1942 թ. գարնանը Գորիս քաղաքում շահագործման հանձնվեց հրակայուն աղյուսի գործարանը։ Նույն թվականի ամռանը տեղական արդյունաբերության կոմբինատը բացեց մուրաբաների եփման ցեխ։ 1943 թ. վերջին քաղաքում շահագործման հանձնվեց տարեկան 30.000 դեկալիտր արտադրողականությամբ գարեջրի գործարանը։

Պատերազմի տարիներին շրջանի կուսակցական կազմակերպությունը և սովետական օրգանները հոգում էին նաև ժողովրդական տնտեսության հետագա վերելքի համար։ Արդյունաբերության նոր ձեռնարկություններ գործարկելու հետևանքով 1944 թ. նկատելի էր, որ ունեցած 150 կիլովատ հզորությամբ հիդրոէլեկտրակայանը արդեն չի կարող բավարարել շրջանի աճող պահանջները և հարց դրվեց կառուցելու երկրորդ և երրորդ հիդրոէլեկտրակա-

18 «Ստալինյան դրոշով», 14. III. 1943։
19 Գորիսի շրջսովետի գործկոմի արխիվ, գ. 494, թ. 12։
20 «Սովետական Հայաստան», 13. I. 1942։
21 Նույն տեղում, 30. IX. 1941։
22 Մլի արխիվ, ֆ. 15, գ. 200, թ. 361։

յանները։ 1945 թ. սեփական նյութական միջոցներով սկսվեց Ակների հիդրոէլեկտրակայանի առաջին հերթի շինարարությունը։

1944 թ. վերջին նախագծվեց 52 կմ երկարությամբ ռադիոգծեր անցկացնել շրջկենտրոնից դեպի Քարաշեն, Կյորու (Զորաշեն), Մաղանջուղ (այժմ Այդենձոր), Բայանդուր, Շամսզ գյուղերը և 75 կմ երկարությամբ հեռախոսի երկրորդ դիծ՝ դեպի Տեղ, Շինուհայր, Տաթև։

Գորիս քաղաքում սկսեց կառուցվել Հայրենական պատերազմում զոհված զանգեզուրցիների հիշատակին նվիրված աղբյուր-հուշարձան, որն ավարտվեց պատերազմից հետո։

Պատերազմի տարիներին կոմունիստական կուսակցության գաղափարական աշխատանքի արդյունք էին թիկունքում՝ աշխատավորների քաղաքական և աշխատանքային ակտիվության աճը, իսկ ռազմաճակատում՝ սովետական մարտիկների մասսայական հերոսությունը։ Գորիսի շրջանում ևս գաղափարական աշխատանքի ճիշտ կազմակերպման շնորհիվ անհամեմատ բարձրացավ աշխատավորների քաղաքական ակտիվությունը։ Ուսմանը զուգընթաց շրջանի ուսուցիչները և աշակերտները, առանձնապես ամառային արձակուրդների օրերին, մեծ օգնություն էին ցույց տալիս կոլտնտեսություններին։ Միայն 1942 թ. շրջանի դպրոցականները վաստակեցին 266.177 աշխոր[23]։

Բնակչության բուժսպասարկմանը նվիրվեցին առողջապահության բնագավառի աշխատողները։ Պատերազմի տարիներին նրանց անձնվեր աշխատանքի շնորհիվ շրջանում համաճարակային բռնկումներ գրեթե չեղան։ Բացի բնակչության սպասարկումից, նրանք հատուկ խնամք էին կազմակերպում արձակուրդում գտնվող վիրավոր բանակայինների նկատմամբ։

Աշխատավորության գեղարվեստական սպասարկման գործում խրախուսելի աշխատանք կատարեց Գորիսի պետական թատրոնը, որը 1942—1943 թթ. բեմադրեց Կ. Սիմոնովի «Ռուս մարդիկ» և Վ. Պրուտի «Շրջկոմի քարտուղարը» ռազմա-հայրենատիրական պիեսները։

1942 թ. փետրվարի 24-ին Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահությունը կառավարական հատուկ առաջադրանքներ կատարելու համար հանրապետության Գերագույն սովետի պատվոգրով պարգևատրեց Գորիսի շրջանի մի խումբ աշխատողների[24]։

ՍՍՀՄ Գերագույն սովետի Նախագահության 1944 թ. փետրվարի 8-ի հրամանագրով Կորնիձորի Կիրովի անվան կոլտնտեսության վարչության նախագահ Հարություն Մաիլյանը և Բայանդուր գյուղի Թելմանի անվան կոլտնտեսության ձիաբուծական ֆերմայի վարիչ Անդրանիկ Սարգսյանը գյուղատնտեսության և անասնաբուծության զարգացման ասպարեզում կառավարության առաջադրանքները հաջողությամբ կենսագործելու համար պարգևատրվեցին Լենինի շքանշանով։

---

23 Նույն տեղում, գ. 127, թ. 112։

24 «Սովետական Հայաստան», 25. II. 1942։ Այդ թվում՝ Քարահունջի կոլտնտեսության վարչության նախագահ Մակար Աբրահամյանը, Խնձորեսկի և Տաթևի գյուղական սովետների գործկոմների նախագահներ Մխիթար Ասադյանը և Գարեգին Վարդազարյանը, շրջկենտրոնի կոլտնտեսության սկզբնական կուսակցական կազմակերպության բյուրոյի քարտուղար Տիգրան Բոյունցը և շրջսովետի գործկոմի նախագահ Նիկոլայ Հայրապետյանը։ Կառավարության կողմից թանկարժեք նվերների արժանացան կուսակցության Գորիսի շրջկոմի երկրորդ քարտուղար Միկիտ Հակոբյանը և Շինուհայր գյուղացի Արմենակ Առաքելյանը։

Հացահատիկային կուլտուրաների և ծխախոտի բարձր բերք ստանալու համար Տեղ գյուղի կոլտնտեսության վարչության նախագահ Գալուստ Սուլեյմանյանը պարգևատրվեց «Պատվո նշան» շքանշանով։ Ձիաբուծության բնագավառում ձեռք բերած նվաճումների համար «Պատվո նշան» շքանշանով պարգևատրվեց Խնձորեսկի կոլտնտեսության ձիապահ Եփրեմ Բաբալարյանը։ Նույն հրամանագրով կուսակցության Գորիսի շրջկոմի առաջին քարտուղար Լևոն Սարգսյանը և շրջսովետի գործկոմի նախագահ Սողոմոն Կարապետյանը պարգևատրվեցին «Պատվո նշան» շքանշանով։ Շրջանի գյուղատնտեսության բնագավառի 9 աշխատողներ պարգևատրվեցին մեդալներով։

Այսպիսով, Գորիսի շրջանի աշխատավորները Հայրենական պատերազմի ժամանակ, սովետական երկրի մյուս քաղաքների ու շրջանների աշխատավորության շարքերում պատվով կատարեցին իրենց պարտքը հայրենիքի հանդեպ։

ГОРИССКИЙ РАЙОН В ГОДЫ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ

Г. А. АРУТЮНЯН

Резюме

В годы Великой Отечественной войны трудящиеся Горисокого района под руководством партийных организаций внесли свой огромный вклад в дело обеспечения победы над фашистской Германией. 4330 тружеников района, находясь на фронтах, принимали непосредственное участие в сражениях против немецко-фашистских захватчиков.

Перестроив свою работу согласно требованиям военного времени, трудящиеся района выполняли и перевыполняли государственные задания и сдавали государству значительное количество сельскохозяйственной продукции. Колхозники, рабочие и служащие принимали активное участие в организаций всесторонней помощи фронту. За свой самоотверженный труд они были удостоены благодарности Верховного Главного командования, многие из них были награждены орденами и медалями СССР.